

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/9

13 հունվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարազդատ Մուրադյանի գանգատը ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 140 որոշման դեմ:

Ա/Ձ Վարազդատ Մուրադյանի գանգատում բերված փաստարկները.

Հիմք ընդունելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 9-րդ հոդվածի, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի, 9-րդ հոդվածի բ) ենթակետի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, Ա/Ձ Վարազդատ Մուրադյանը հայտնում է, որ ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ պետի 07.10.2014 թ-ի որոշումը ոչ իրավաչափ է, այն կայացվել է վերոնշյալ իրավական նորմերի դրույթներով նախատեսված կանոնները չպահպանելու, հետևաբար նաև օրենքով նախատեսված իրավունքները և պարտականությունները ոտնահարելու հետևանքով:

Այսպես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրությամբ նախատեսված կարգով ստուգումն իրականացնող և դրա արդյունքում հայտնաբերված խախտումների մասին ստուգումն իրականացնող մարմինը չի տեղեկացրել կատարված խախտումների արդյունքում կազմված նախագծի մասին, խախտումներ հայտնաբերելու ուղղությամբ կազմված նախագիծը օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի առաքվել՝ դրանով իսկ նպաստելով գանգատաբերի օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների խախտմանը, այն է՝ նախագիծը ստանալու արդյունքում գանգատաբերը հնարավորություն կունենար ծանոթանալ ստուգման ակտին, խախտումների վերաբերյալ նախագծին և դրա առթիվ ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները: ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ պետի 07.10.2014 թ-ի որոշման մասին գանգատաբերը տեղեկացել է 2014 թ-ի հոկտեմբերի 27-ին: Ավելին, իրեն հայտնի չէ, թե հարկային մարմնի ղեկավարի վկայակոչած՝ «չկատարված հարկային պարտավորությունները» ինչ ժամանակին են վերաբերում, կամ ստուգման ինչ իրավական հիմքեր են հանդիսացել վերոնշյալ որոշումը կայացնելու համար: Բացի այդ, ստուգումն իրականացնող անձանց կողմից չեն ներկայացվել ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները..., իսկ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ ստուգումն իրականացնող անձի /անձանց/ ոչ իրավաչափ գործողությունների պատճառով գանգատաբերը գրկվել է իր օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականություններն իրականացնելու հնարավորությունից, Ա/Ձ Վարազդատ Մուրադյանը խնդրում է ՀՀ ՖՆ Հրազդանի ՏՀՏ պետի 07.10.2014 թ-ի թիվ 140 որոշումը վերացնել, քանի որ այն համարվում է ոչ իրավաչափ վարչական ակտ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

